

ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Թաթուլ Մարգարյանի հարցազրույցը «Հայրենիք»
շաբաթաթերթին

9 մայիսի 2008թ.

**Հ. Սիյուքում բոլորս մտահոգված էինք Հայաստանում հետընտրական բարդ
քաղաքական իրավիճակով: Կայունությունը վերականգնելու ի՞նչ քայլեր են
ձեռնարկվել: Որո՞նք են 2008թ. փետրվարյան ընտրության հիմնական դասերը:**

Պ. Նախ, մենք պետք է հստակ տարանջատենք ընտրությունները և հետընտրական
զարգացումները: Ըստ ավելի քան 350 դիտորդից կազմված Միջազգային
դիտորդական առաքելության գնահատականի, 2008թ. փետրվարի
նախագահական ընտրությունները հիմնականում համապատասխանում էին ԵԱՀԿ
և Եվրոպայի խորհրդի նկատմամբ ստանձնած պարտավորությունների և
ժողովրդավարական ընտրությունների չափանիշներին, ինչը միջազգային
դիտորդների առաքելությունը նշել էր իր նախնական և հետագա զեկույցներում:
Ընտրություններն ավարտված են, և Սահմանադրական դատարանը հաստատել է
ընտրության արդյունքները:

Գ-Ժբախտաբար, ընտրությունների վրա ստվեր զցեցին հետընտրական
զարգացումները, որոնք լուրջ մարտահրավեր նետեցին ժողովրդավարական
գործընթացին և պետական ինստիտուտներին: Անտեսվեց այն հիմնական
հրամայականը, որ ոչինչ չի կարող արդարացնել արհեստական պառակտման
միջոցով մեր պետականության հիմքերի, Հայրենիքի կայունության և Արցախի
անկախության վտանգումը:

Նախագահ Սերժ Սարգսյանը արդեն իսկ երկխոսություն է սկսել Հայաստանի
քաղաքական ուժերի և քաղաքացիական հասարակության հետ, և այդ ուղղությամբ
աշխատանքը շարունակվելու են առաջիկայում: Ընտրությանը հաջորդեց Ազգային
ժողովում քաղաքական նոր կոալիցիայի ձևավորումը, որը ներկայացնում է ՀՀ
ընտրազանգվածի ավելի քան 80 տոկոսը: Հայաստանի ղեկավարությունը գտնում
է, որ միայն կառուցողական երկխոսության և ներգրավվածության, բազմաթիվ
կառուցողական գաղափարների և լուծումների նկատմամբ
հանդուրժողականության միջոցով հնարավոր է ճիշտ հետևություններ անել և ճիշտ
որոշումներ և քաղաքականություն իրագործել թե ներքաղաքական, թե միջազգային
ասպարեզներում:

Հայաստանի իշխանությունները գիտակցում են, որ հետընտրական
զարգացումների հետևանքով Հայաստանի քաղաքական գործընթացները
հայտնվել են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Որքան էլ
ցավալի լինեն Հայաստանի հետընտրական զարգացումները, այնուամենայնիվ
պետք է նշել, որ Հայաստանը չի հեռացել ժողովրդավարական զարգացման իր
հիմնարար ուղուց: Եվ մենք անելու ենք ամեն ինչ ներքին կայունության և մեր երկրի
միջազգային հեղինակության վերականգնման ուղղությամբ:

Հ. Հայաստանի նոր կառավարությունը Ազգային Ժողովում ստացավ վստահության քվե և սկսեց իր գործողությունները: Որո՞նք են այս նոր կառավարության հիմնական գերակայություններն ու նպատակները:

Պ. Վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ նոր կառավարությունը անշուշտ շարունակելու է նախորդ կառավարությունների պաշտոնավարման ընթացքում արձանագրված առաջընթացը, որի շնորհիվ տեղի էր ունեցել երկնիշ տնտեսական աճ և աղքատության մակարդակի նվազում 56,1 տոկոսից մինչև ներկայիս 26,5 տոկոսի: Նախագահ Սարգսյանի ընտրական ծրագիրը և 2008թ. ապրիլի 30-ին Ազգային ժողովի կողմից հաստատված նոր կառավարության ծրագիրը սահմանել են հավակնոտ, բայց և իրական նպատակներ և գերակայություններ: Այս ծրագիրը ընդունում է տնտեսական և սոցիալական մարտահրավերների առկայություն և սահմանում է են դրանց հաղթահարման իրատեսական եղանակներ:

Ազգային անվտանգությունն ու ակտիվ տնտեսական քաղաքականության միջոցով կայուն զարգացման ապահովումը կառավարության հիմնական գերակայությունն է: Այդ առումով կարևորվում է մակրոտնտեսական կայունությունը և տնտեսական աճի բարձր տեմպերը, աղքատության կրճատումը, տնտեսության հետագա ազատականցումը, ներառյալ մրցակցային ձեռներեցության զարգացումը, գործարարության և ներդրումների համար լավագույն պայմանների ապահովումը: Այլ գերակայությունների թվում են արդյունավետ պետական կառավարման համակարգի ձևավորումն ու կոռուպցիայի դեմ պայքարը, ՀՀ կրթական և գիտական հաստատությունների զարգացումը, տարածքային համաչափ զարգացումը, այն է՝ Երևանի և մարզերի միջև տնտեսական աճի տարբերության էական կրճատում, ինչպես նաև քաղաքացիների սոցիալական պաշտպանվածությունը և կենսաթոշակային համակարգը:

2008-2012թթ.-ի Կառավարության գործունեության շնորհիվ ակնկալվող հիմնական արդյունքների թվում են Հայաստանի ամբողջ տարածքով համաչափ բաշխված տնտեսության աճի տարեկան 8-10 տոկոս տեմպեր, աղքատության մակարդակի նվազում մինչև 11 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակի՝ մինչև 1.6 տոկոս, կրթության ոլորտի ծախսերի աճը մինչև ՀՆԱ-ի 3.5 տոկոս և առողջապահության ծախսերի՝ ՀՆԱ-ի 2.2 տոկոս: Այս նպատակները իրագործելի են և կիրագործվեն ողջ հայ ժողովրդի նախաձեռնող և ստեղծարար ներուժի շնորհիվ, և այս առումով բոլորս, այդ թվում Սփյուռքը, իր դերակատարությունը ունենք Հայաստանի տնտեսական աճի ապահովման գործում:

«Հայրենիք». Ինչպե՞ս են պատկերացնում Նախագահը և նոր կառավարությունը Հայաստան-Սփյուռք հարաբերությունների հեռանկարը:

Պատասխան. Հայաստան-Սփյուռք համագործակցությունը կարևոր տեղ է զբաղեցրել Նախագահ Սարգսյանի նախընտրական ծրագրում, սա նաև արտացոլված է նոր Կառավարության ծրագրում: Այսպիսով, համագործակցության խորացումը շարունակելու է լինել ՀՀ իշխանությունների գերակայությունների

թվում, առավել ևս որ Հայաստան-Սփյուռք կապերը արդեն ամուր գարգանում են բազմաթիվ բնագավառներում: Այս համագործակցության հիմքում մեր փոխադարձ համոզմունքն է, որ միջազգային ասպարեզում ազգային հիմնախնդիրների արդյունավետ կարգավորման համար մենք պետք է աշխատենք միասնաբար՝ ավելի ամրապնդելու հայոց անկախ պետականությունը և հաջողությամբ շարունակելու Հայաստանի ժողովրդավարական գարգացումը: Եվ սա պահանջում է մեզանից լինել ավելի հզոր և առավել միասնական, հատկապես Հայաստանի վերջին իրադարձությունների ֆոնի վրա: Այս առիթով ցանկանում եմ ես մեկ անգամ շնորհակալություն հայտնել ամերիկահայ առաջատար կազմակերպություններին նրանց խոհեմության, ազգային միասնության և համերաշխության խորը գիտակցության և Հայաստանի ղեկավարությանն ու ժողովրդին անվերապահ աջակցության համար:

Անկախության առաջին իսկ տարիներից երիտասարդ հայոց պետությունը նեցուկ կանգնեց ազգային հիմնախնդիրների իրագործմանը, այդ թվում Արցախի պաշտպանությանը և Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Հպարտանալ կարելի է տեսնելով, թե ինչպես Սփյուռքը, իր հերթին, նեցուկ կանգնեց նորանկախ պետականությանը, դժվարին ժամանակաշրջանում ստանձնելով պատասխանատվության իր բաժինը: Ազգային միասնությունը, անշուշտ, մեր ազգային նպատակների իրագործման՝ հզոր և բարգավաճ Հայաստանի կառուցման, Արցախի ազատության պաշտպանության և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, լավագույն երաշխիքն է:

Հ. Ո՞րն է Հայաստանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանությունը միջազգային ճանաչման հարցում: Փոխվե՞լ է արդյոք Հայաստանի քաղաքականությունը Սերժ Սարգսյանի նախագահ ընտրվելուց հետո:

Պ. Ցեղասպանության ճանաչման հարցում Հայաստանի դիրքորոշումը հրապարակայնորեն հնչեցվել է բազմիցս: Հայոց ցեղասպանության ճանաչումը միայն պատմական անարդարությունը վերացնելու հարց չէ. այն ուղղակիորեն առնչվում է Հարավային Կովկասում ներկայիս գարգացումներին ու կայունության և խաղաղության հեռանկարներին: Թուրքիան ոչ միայն շարունակում է մերժել Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության փաստը, այլ նաև շարունակում է խուսափել ներկայիս կարևոր խնդիրներին լուծում տալուց, ինչպիսիք են նրանց կողմից Հայաստանի նկատմամբ 15 տարի իրականացվող շրջափակման վերացումը: Սա հաճախ այլ ընտրություն չի թողնում, քան Ցեղասպանության ճանաչմանը և հայ-թուրքական հարաբերությունների ժամանակակից խնդիրների կարգավորմանը հետամուտ լինել միջազգայնորեն:

Արտաքին քաղաքականության վերաբերյալ իր առաջին ելույթում նախագահ Սարգսյանը շեշտեց, որ հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը մնում են Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում: Ապրիլի 24-ի ուղերձում նախագահ Սարգսյանը մասնավորապես նշեց. « Ցեղասպանության դատապարտման հարցում մեր ժողովականությունն ապագա չունի. հատկապես՝ այսօր, երբ աշխարհի բազմաթիվ երկրներ իրենց ձայնն են միացրել ճշմարտության ձայնին»: Հայոց ցեղասպանության ճանաչումը

միայն հայկական հարց չէ: Մարդկության հանդեպ ոճիրները վաղեմության ժամկետ չունեն. դրանք ունեն համամարդկային հնչեղություն ու հետևանքներ և պետք է համընդհանուր ճանաչում ստանան:

Հարց. Որո՞նք են հայ-թուրքական հարաբերությունների բարելավման հեռանկարները:

Պ. Հայաստանի նորընտիր նախագահ պրն. Ս. Սարգսյանը հայտարարել է, որ շարունակելու է Թուրքիայի նկատմամբ վերջին տարիների ՀՀ քաղաքականությունը: Մենք պատրաստ ենք դիվանագիտական կապեր հաստատել Թուրքիայի հետ, ինչը շարունակ առաջարկվել է 1991թ-ից ի վեր, նկատի ունենալով, որ Թուրքիան պետք է Հայաստանի հետ իր խնդիրները լուծի բնականոն երկկողմ միջպետական հարաբերությունների շրջանակներում: Այս պատրաստակամությունը վերահաստատվել է թե նորընտիր Նախագահի և թե նորանշանակ վարչապետի և արտաքին գործերի նախարարի կողմից:

Հայաստանի դիրքորոշումը հստակ է, թափանցիկ: Երկկողմ հարաբերությունների բարելավման համար մենք նախապայմաններ չենք առաջադրում: Մեզ հետաքրքրում են հստակ քայլերն ու արդյունքները, ոչ թե երկկողմ անորոշ գործընթաց հանուն գործընթացի: Այս առումով մենք գտնում ենք, որ առաջընթաց հնարավոր է:

Հ. Ադրբեջանական պաշտոնական հայտարարությունների ավելի ռազմատենչ բնույթը և մարտի 4-ին ԼՂՀ և ադրբեջանական ուժերի շփման գծում ադրբեջանական ներխուժումն լուրջ մտահոգության տեղիք են տալիս Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հարցում: Ո՞րն է այս գործընթացի ներկա վիճակը:

Պ. Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ Հայաստանի նոր ղեկավարության դիրքորոշումը մնում է հաստատուն: Ինչպես նշել են Նախագահ Սարգսյանը և նախարար Նալբանդյանը, մենք դիրքորոշումն այն է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման փաստն ու իրավունքը պետք է հաստատվի և ճանաչվի միջազգայնորեն: Հայաստանը հավատարիմ է մնում ԵԱՀԿ Սինսկի Խմբի շրջանակներում բանակցությունների միջոցով Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Թեև վերջնական կարգավորումը դեռևս բանակցվում է, սակայն որոշ իրողություններ արդեն իսկ անդարձելի են: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը 1991 թվականից ի վեր գոյություն ունի, այն համապատասխանում է անկախ պետության բոլոր չափանիշներին, ժողովրդավարական ճանապարհով անց է կացրել մի քանի նախագահական և խորհրդարանական ընտրություններ: Ավելին՝ ակնհայտ է, որ սուվզաիթյան ջարդերի, դրանց հետևած կոտորածների և Խորհրդային Ադրբեջանում բնակվող 350 հազար հայերի արտաքսման, արցախահայության նկատմամբ պատերազմական գործողությունների, և ներկայումս Ադրբեջանում ասստկացող

հայատյաց քաղաքականության հետևանքով ստեղծվել է մի իրողություն, երբ Ադրբեջանը չի կարող անգամ հավակնել կառավարելու Լեռնային Ղարաբաղը: Միջազգային հանրությունում շատերն են ճանաչում այս իրողությունը: Եվ Մինսկի խմբի գործընթացի շրջանակներում բանակցվող փաթեթի հիմքում Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքն է: